Ոգեկոչման օրինակով՝ ի ցույց դնել պատմության կառուցվածքային էությունը



ԿԱՏՐԻԱ ՏՈՄԿՈ
ՍՏԻՎԵՆ ՍԹԵԳԵՐՍ
ԵՎՐՈԿԼԻՈ, (EUROCLIO),
Գործադիր խմբագիրներ

ՄԱՐԶՈՒԵՆ ԴԵԼԿՈ
ԵՎ ՀԱՆՆԱ ԶԵԼԵՆՍԿԱՅԱ
EVENS ՀԻՄՆԱԴՐԱՄ,
Գործընկեր խմբագիրներ

ԴԵՎԻԴ ՍԻՊՆՅԵՎՍԿԻ
Ձևավորման և ստեղծագործական
ուղղության պատասխանատու

Զոաննա Վոջդոն

Վրոցլավի համալսարանի դոցենտ է (Լեհաստան) և պատմության և քաղաքացիական կրթության դասավանդման մեթոդաբանության ամբիոնի վարիչ: Նա Պատմության դիդակտիկայի միջազգային ընկերության խորհրդի անդամ է և վերջինիս գիտական ամսագրի `Journal of Research on History Didactics, History Education and History Culture (JHEC) խորհրդի խմբագիր: Նա նաև Հանրային պատմության միջազգային ֆեդերացիայի ղեկավար կոմիտեի անդամ է (International Federation for Public History Steering Committee):

Զոաննայի ռազմավարությունը ` «Ոգեկոչման օրինակով՝ ի ցույց դնել պատմության կառուցվածքային էությունը՝ սովորեցնելու համար, որ պատմությունը կառուցված պատմվածք է», խրախուսում է սովորողներին վերլուծել անցյալի հուշերը իրենց տարածքում՝ դիտելով պատմական հուշատախտակները, հուշարձանները և հասարակական վայրերի անվանումները: Սովորողներին խնդիրն է պարզել, թե ինչ հաղորդագրություն (ներ) են կրում այս հուշարձանները, ում կողմից, ում համար և ե՞րբ են դրանք ստեղծվել լ, ովքեր են անտեսվելլ և ինչու: : Սովորողները ուսումնասիրում են, թե ինչպե՞ս և ինչու են ոգեկոչման այս պրակտիկանները փոխվել ժամանակի ընթացքում ` հասարակական վայրերում պատմության կառուցված բնույթի մասին պատկերացում կազմելու համար: Այս դասը (ռազմավարությունը) ներկայացնում է դասարանային էքսկուրսիաների նորարարական մոտեցում `այլընտրանք այցելություններին, որոնք սովորաբար նախատեսված են սովորեցնելու համար, թե ինչ է անցյալը, այլ ոչ թե ինչպես է այն ներկայացվում: Ռազմավարությունը «Մտածելով բազմազգության մասին» (Myśląc o wieloetniczności) գրքի մի մասն է ` հիմնված Պետեր Սեյքսասի կողմից մշակված Մեծ վեցյակի պատմական մտածողության հասկացությունների վրա:.

Այս դասապլանը հինգ մասից բաղկացած ուսուցման ռազմավարության շարքի մի մասն է, որը մշակվել և փորձարկվել է ուսուցիչների կողմից ուսուցիչների համար: Եվրոպական պատմությունների փոխանակման ընդհանուր նպատակն է օգնել երիտասարդներին հասկանալ եվրոպական պատմության բարդությունը, բազմազանությունը և անդրազգային բնույթը և ճանաչել, թե ինչպես պատմությունը կարող է ներգրավել բոլորին Եվրոպան հասկանալու գործում: Լրացուցիչ տեղեկությունների համար այցելելք sharingeuropeanhistories.eu.

EuroClio
Inspiring History and Citizenship Educators

Evens Foundation

Ոգեկոչման օրինակով՝ ի ցույց դնել պատմության կառուցվածքային էությունը

ԶՈԱՆՆԱ ՎՈՋԴՈՆ

Պատմությունը մեր շուրջն է: Այն առկա է ցուցանակների, հուշաքարերի, հուշարձանների, շենքերի և հասարակական վայրերի անվանումներում: Ուսուցման այս ռազմավարության (այսուհետ նաև՝ ռազմավարություն) նպատակն է սովորողների գիտակցությանը հասցնել անցյալի ոգեկոչման ձևավորման եղանակները, - թե ինչու է անցյալը ներկայացվում այս կամ այն եղանակով, ինչպես նաև այն ամենը ինչը հաշվի չի առնվում կամ անտեսվում է:

ՈՒՍՈՒՑՄԱՆ ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱԿՆԱՐԿ

Ուսուցման այս ռազմավարությունը խրախուսում է սովորողներին վերլուծել և հասկանալ, ինչպես է անցյալը ոգեկոչվում իրենց համայնքում ուսումնասիրելով պատմական, հուշարձաններն ու հուշատախտակները, ինչպես նաև հասարակական վայրերի՝ քաղաքների, փողոցների, հրապարակների, շենքերի անվանումները:

Սովորողների խնդիրն է պարզել, թե ինչ հաղորդագրություն/իմաստ (ներ) են կրում այս հուշարձանները, ում կողմից և ում համար են դրանք ստեղծվել, ե՞րբ են դրանք ստեղծվել, ում շահերն են սպասարկում : Նրանք կբացահայտեն, թե ինչպե՞ս և ինչու՞ են ժամանակի ընթացքում փոխվել ոգեկոչման ձևերը, օրինակ, ինչպե՞ս են փոխվել փողոցների անունները, կամ ինչ հուշատախտակներ են ավելացվել, հանվել կամ նորոգվել, որպեսզի հասկանան, որ հանրային տարածքում պատմությունը ստեղծվում և վերստեղծում է տարբեր պատճառներով:

Այս ռազմավարությունը նորարարական մոտեցում է էքսկուրսիաներին, այլընտրանք այցելություններին, որոնք որպես կանոն նպատակ ունեն սովորեցնել թե ի՞նչ է անցյալը, ալ ոչ թե ի՞նչպես է անցյալը ներկայացվում

Ո՞ՐՆ Է ՈՒՍՈՒՑՄԱՆ ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՆՊԱՏԱԿԸ

Ուսուցման այս ռազմավարությունը նպատակ ունի ցույց տալ, որ հանրային վայրերում ներկայացված պատմությունը և պատմությունը ընդհանրապես կառուցված պատում/նարատիվ է, որին պետք է քննադատորեն մոտենալ:

Այն ցույց է տալիս, թե ինչպես է ընկալվում պատմությունը դասասենյակներից և դասագրքերից դուրս, և սովորողների առաջ խնդիր է դնում ավելի լայն նայել ներկայացված դերակատարներին կամ շահագրգիռ խմբերին, ինչպես նաև քննարկել նրանց, ովքեր կարող էին ներկայացված լինել:

· Խորը վերլուծությունն ու համեմատությունը թույլ կտան գտնել ընդհանրություններ, տարբեր ազդեցություններ և վերազգային միտումներ: Միևնույն ժամանակ, սովորողները կարող են հանդիպել զգայուն, հակասական նարատիվների կամ խնդիրների և քննարկել, թե ինչպես կարող են դրանց հետ առնչվել հասարակական վայրերում:



Ի՞նչ է պետք անել ուսուցման այս ռազմավարությունը ձեր դասարանում կիրառելու համար

ՔԱՅԼ 1. ՊԱՏՐԱՍՏԵՔ ՆՅՈՒԹԵՐԸ

Ա. Որոշեք այն պատմական վայրը, որը դուք կուսումնասիրեք
Ձեր համայնքում ընտրեք մի տարածք, որտեղ կան մի շարք նշանակալից հուշատախտակներ / հուշարձաններ / շենքեր / հասարակական վայրերի անուններ, որոնք հիշատակում են անցյալը: Դուք պետք է փորձեք ընտրել այնպիսի վայր, որտեղ դրանցից մի քանիսը կան՝ համեմատաբար միմյանց մոտ տարածքում: Սա կարող է կազմակերպվել նաև որպես վիրտուալ շրջագայություն՝ օգտագործելով Google Map-ը, StreetView-ն կամ մեկ այլ ծրագրային հավելված:

Բ. Պատրաստեք տվյալ վայրի/երի մասին հիմնական տեղեկատվությունը
Ինքներդ ծանոթացեք որոշ հիմնական տեղեկատվության հետ, այն վայրերի մասին, որոնք պատրաստվում եք հանձնարարել սովորողներին ուսումնասիրել: Սովորողների աշխատանքը պարզեցնելու համար կարող եք տալ հետևյալ հարցերը.

- Ե՞րբ է ստեղծվել այս ոգեկոչումը:
- Ո՞վ է այն ստեղծել:
- Ո՞ւմ նախաձեռնությամբ:
- Ի՞նչ հանգամանքների բերումով է ստեղծվել այս ոգեկոչումը:
- Ի՞նչ է այն հիշատակում:
- Հիշատակությունն արդյո՞ք արտացոլում է տեղական, ազգային, միջազգային իրադարձություն կամ վերը նշվածի համադրություն:
- Ո՞ր ոլորտին է վերաբերում (քաղաքականություն, մշակույթ, կրոն և այլն):
- Ո՞ր պատմական ժամանակաշրջաններն են արտացոլվում այս ոգեկոչումներում:
- Ժամանակի ընթացքում փոխվե՞լ է այս հիշատակումը: (Սա հատկապես լավ է ստացվում փողոցների անունների հետ):

ՔԱՅԼ 2. ՕԳՏԱԳՈՐԾԵՔ ՆՅՈՒԹԵՐԸ ԴԱՍԱՐԱՆՈՒՄ / ԷՔՍԿՈՒՐՍԻԱՅԻ ԺԱՄԱՆԱԿ

Գործողություն 1. Էքսկուրսիայից առաջ
Կախված առկա տեղեկատվության քանակից, տեսակից և (կամ) որակից՝ էքսկուրսիայից առաջ, սովորողներին կարող եք ծանոթացնել ընդհանուր ժամանակաշրջանին կամ թեմային: Դա կարելի է անել կարճ դասախոսության, տեսահոլովակի կամ ուսուցողական զրույցի միջոցով՝ պատմության հիշարժան իրադարձությունների մասին (աշխարհագրական կամ ժամանակային առումով, որոնք կարևոր կլինեն ապագա էքսկուրսիայի համար): Սա հնարավորություն կտա սովորողներին իրենց նախկին բացահայտումները կամ ընկալումները համապատասխանեցնել այցելության / էքսկուրսիայի ընթացքում հասարակական վայրում հանդիպած օբյեկտների հետ:

Գործողություն 2. Էքսկուրսիա
Սովորողներին տարեք շրջայցի համապատասխան հուշահամալիր/ներ: Այնտեղ նրանք տեղեկություններ կհավաքեն հուշահամալիրի վերաբերյալ: Նրանց կարելի է խնդրել փաստաթղթավորել արդյունքները՝ նշումներ կատարելով կամ լուսանկարելով տվյալ օբյեկտները: Կարող է օգտակար լինել ստեղծել աշխատանքային թերթիկ, որը սովորողները լրացնեն շրջագայության ընթացքում և շրջայցից հետո հղում կատարեն դրան՝ ուսուցչի հետ քննարկման ժամանակ:

Գործողություն 1. Քննարկում
Սովորողների խնդիրն է վերլուծել ուսումնասիրված ոգեկոչման օրինակը պատասխանելով մի քանի հարցերի: Այդ հարցերը կարող են լինել.

- Ո՞վ է կանգնեցրել կամ անվանակոչել այս հուշարձանները:
- Ե՞րբ են կանգնեցվել կամ անվանակոչվել

այս հուշարձանները:
- Ինչո՞ւ են այս կառույցները տեղադրվել հանրային տարածքում:
- Ո՞ւմ տեսակետն են ներկայացնում այս հուշարձանները:
- Պատմական ո՞ր ժամանակաշրջանն են արտացոլում այս հուշարձանները:
- Ի՞նչ նպատակների են ծառայում այս հուշարձանները:
- Ժամանակի ընթացքում այս հուշարձանները արդյո՞ք փոփոխության են ենթարկվել:

Սա ուսուցչի համար հնարավորություն է հասկանալու, թե որ հարցերն են պահանջում առավել շեշտադրում կամ հետագա բացատրություն: Սա նաև առիթ է անդրադառնալու պատմությանը և դրա հարակից խնդիրներին, որոնք կարող են լինել զգայուն, վիճելի կամ հակասական: Սովորողները պետք է հասկանան պատմական նարատիվների ընտրովի կառուցված բնույթը:

Ի՞ՆՉ ԽՈՉԸՆԴՈՏՆԵՐԻ ԿԱՐՈՂ Է ՀԱՆԴԻՊԵԼ ՈՒՍՈՒՑԻՉԸ՝ ԿԻՐԱՌԵԼՈՎ ՈՒՍՈՒՑՄԱՆ ԱՅՍ ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅՈՒՆԸ

Էքսկուրսիաների կազմակերպումը
Էքսկուրսիայի կազմակերպումը ժամանակատար է, որը միաժամանակ պահանջում է կազմակերպվածություն, կարգապահություն և մեծ ուշադրություն: Բացի այդ, հնարավոր է խնդիրներ առաջանան տվյալ տարածքում համապատասխան որակի / օգտակարության բավարար թվով օբյեկտներ գտնելու հարցում: Այս երկու խնդիրների հնարավոր լուծումը կարող է լինել վիրտուալ էքսկուրսիայի կազմակերպումը, չնայած իրականը ավելի նախընտրելի է:

Հայեցակարգային ըմբռնում
Ուսուցիչները էքսկուրսիայից առաջ պետք է համապատասխան տեղեկատվություն տրամադրեն՝ հաշվի առնելով իրենց սովորողների նախնական գիտելիքները: Կարող են հանդիպել եզրույթներ և/կամ հասկացություններ, որոնք բացատրելու կամ պարզաբանելու կարիք ունեն, որպեսզի էքսկուրսիան բոլորին հասանելի լինի:

Հուշող հարց
Կլինեն սովորողներ, ովքեր աշխատանքը կկատարեն առանց հավելյալ հուշումների: Մյուսներին անհրաժեշտ կլինի հուշող հարցեր: Դրանց օրինակները բերված են օրինակելի նյութում

ԻՆՉՊԵ՞Ս ԿԱՐԵԼԻ Է ՈՒՍՈՒՑՄԱՆ ԱՅՍ ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅՈՒՆՆ ԱՎԵԼԻ ՆԵՐԱՌՈՂ ԴԱՐՁՆԵԼ

Ուսումնառության ընթացքում բացթողումներ ունեցող սովորողներին աջակցելու համար
- Ընտրեք ոգեկոչման համեմատաբար ավելի պարզ նմուշ/առարկա վերլուծելու և / կամ ներկայացնելու համար: Հուշարձանները ամենից հարմարն են այդ նպատակի համար:
- Ընտրեք քիչ քանակի ոգեկոչման նմուշներ/առարկաներ վերլուծելու համար կամ վերլուծության ավելի քիչ դաշտ նախատեսեք:
- Սովորողներին առանձին դերեր հանձնարարեք. օրինակ՝ ավելի թույլ կարողությամբ սովորողը կարող է փաստաթղթավորողի դեր ունենալ, մինչդեռ ավելի բարձր կարողությամբ սովորողը՝ հետազոտող

Մարտահրավեր նետելով ուսումնառության ընթացքում հաջողություններ գրանցող սովորողներին
- Էքսկուրսիայի ընթացքում սովորողները կարող են հարցում անցկացնել՝ անցորդներից հարցնել ոգեկոչման առարկայի նշանակության մասին: Խնդրեք սովորողներին քննարկել իմաստների մեկնաբանման նմանություններն ու տարբերությունները:
- Էքսկուրսիայից հետո կազմակերպեք լրացուցիչ գործողություններ և հանձնարարեք նրանց անդրադառնալ ավելի զգայուն թեմաների, խնդիրների կամ իրադարձությունների, որոնք հավելյալ ուսումնասիրություն են պահանջում:
- Հանձնարարեք ավելի խորքային ուսումնասիրություն անցյալի իրադարձությունների կամ անհատների վերաբերյալ, որոնք արժանի են ոգեկոչման: Խրախուսեք տեղական արխիվների կամ մամուլի օգտագործումը:
- Համեմատել ոգեկոչման պրակտիկանները այլ վայրերում, լինի դա ընդհանուր համեմատություն, թե նույն / նմանատիպ իրադարձությունների համեմատություն իրենց իսկ տարածքում:

Ուսուցման ռազմավարության օրինակը գործողության մեջ

ՎՐՈՑԼԱՎ

Վրոցլավը քաղաք էր, որը դարերի ընթացքում բազմիցս փոխել է իր պատկանելիությունը: Արդյունքում փոխվել է քաղաքի բնակիչների էթնիկ կազմը, և՛ աստիճանաբար (օրինակ՝ միջնադարյան հայրապետական գերմանացման ազդեցության ներքո), և՛ կտրուկ (օրինակ՝ գերմանացիների հետպատերազմյան տեղահանման արդյունքում):

Պրուսիայի առաջնորդները և Երրորդ ռեյխը շեշտը դնում էին քաղաքի գերմանական բնույթի վրա, իսկ Լեհաստանի ժողովրդական հանրապետության ղեկավարները Երկրորդ համաշխարհային պատերազմից հետո շեշտում էին դրա լեհական ծագումը: Խորհրդային կայսրության անկումից հետո, 20-րդ և 21-րդ դարերի սահմաններին, քաղաքի կարգախոսը դարձավ «Վրոցլավը - հանդիպման վայր»: Նոր ղեկավարությունը փորձում էր ցույց տալ քաղաքի դարավոր բազմազանությունը և ընդգծել նրա նախկինում այնտեղ բնակվող տարբեր էթնիկ խմբերին:

21-րդ դարի սկզբին «Պատմության ուղի» հուշատախտակը դրվեց Վրոցլավի Նանկիերա հրապարակի մայթին: Այստեղ տեղադրված բրոնզե հուշատախտակները խորհրդանշում էին քաղաքի պատմության կարևոր իրադարձությունները: Ժամանակ առ ժամանակ ավելացվում են նորերը: Սովորողների խնդիրն է վերլուծել առկա հուշատախտակները, բացահայտել դրանց ստեղծողների նախասիրություններն ու բացթողումները, ինչպես նաև ստեղծել լրացուցիչ հուշատախտակներ:

Հիշեցնող նյութեր

1000	Եռիխկոպտության հիմնումը	1241	Մոնղոլական աղշավանք	1242	Տեղակայումը Մագդեբուրգի օրենքով	1335	Վրոցլավի միացումը Բոհեմական թագավորությանը	1526	Վրոցլավի միացումը ավստրիական Հաբսբուրգի միապետությանը	1530	Զինանշանի շնորհում	1807	Քաղաքի գրավումը Նապոլեոնի բանակի կողմից	1793	Դերձակների հեղափոխությունը	1741	Վրոցլավի միացումը Պրուսիային	1702	Վրոցլավի համալսարանի հիմնադրումը
1842	Առաջին երկաթուղային գիծը - Վրոցլավ - Օլոմոուց	1913	Հարյուրամյակի դահլիճի կառուցումը	1945	Ֆեստոնգ Բրեսլաուի անվան քաղաքի առգրավումը	1980	Համերաշխության արյան զոհերի հիշատակը	1997	Էվխարիստական համաժողովը	1997	Հազարամյակի ջրհեղեղը	2012	ՈՒԵՖԱ-ի եվրոյի առաջնություն	2016	Եվրոպայի մշակութային մայրաքաղաք	2017	Համաշխարհային խաղեր		

ԷՔՍԿՈՒՐՍԻՈՆ ՕՐԻՆԱԿ

Յուսադրմամբ՝ հոգշտոտիսուսակի հանՄոր Նշեք

- Նոր Լոի ԶԱՄՆԱՔԱԿԱՆ, ՍՈՑԻԱԼԱԿԱՆ, ՀՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ Ե (ԿԱՄ) ՍՈՆՈԵԱԿԱՆ ԱԿԱՍՈՒԹՅԱՆ ԴԵՍ,
- ԵԹ ԻՆՉ ԷԼԵԿԻԱԿԱՆ ԻՍԿԻ ԱՆՑԱԼԻ ԱԱՍՈՆՈՒԹՅՈՒՆԸ Է ԱՆ ԱՍՈՍՑՈՒՄ,
- ԱՄՆԻԿՈՆ ԶԱՄԿՈՆ, ՍՈՍՈՍՈՀՇՈՀՇՈՒՄՈՒՆ, ԱԳԱՅԻՆ ԿԱՄ ՍԻՔՍԱԳԱՅԻՆ ԱԱՍՈՆՈՒԹՅԱՆ ՄԻ ԱԱՍ Է,
- ԻՆՉ ԻՍԻԽՈՒԹՅՈՒՆԵՐ Է ԱՍՈՍՑՈՒՄ, ԻՆՉԻՑԴԵՍ ՆԱԱ
- ԿԱԱՆԻՆ ԻՍԻԽՈՒԹՅՈՒՆ Ա ԱՄԱՔԱԿԱՆ ԱԱՍՈՆՈՒԹՅԱՆ ՄԻ ԱԱՍ ԵՄ ԵՍ

800–907	907–985	985–1025	1025–1034	1034–1038	1038–1042	1042–1076	1076–1079	1079–1138	1138–1173	1173–1248	1248–1335	1335–1469	1469–1490	1490–1620
Մեծ Մորավիա Սիլեզիա	Բոհեմիայի Սիլեզիական դքսություն	Լեհական դքսություն	Լեհաստանի թագավորություն	Լեհական դքսություն	Բոհեմիայի դքսություն	Լեհական դքսություն	Լեհաստանի թագավորություն	Լեհական դքսություն	Սիլեզիայի դքսություն	Ստորին Սիլեզիայի դքսություն	Վրոցլավի դքսություն	Բոհեմիայի թագավորություն / Սուրբ Հռոմեական կայսրություն	Հունգարիայի թագավորություն	Բոհեմիայի թագավորություն / Սուրբ հռոմեական կայսրություն

1620–1742	1742–1807	1807	1807–1871	1871–1918	1918–1933	1933–1945	1945–1952	1952–1989	Post-1989
Հաբսբուրգյան միապետություն / Սուրբ հռոմեական կայսրություն	Պրուսական թագավորություն	Առաջին ֆրանսիական կայսրություն	Պրուսական թագավորություն	Գերմանական կայսրություն	Վեյմարի Հանրապետություն	Երրորդ ռեյխի	Լեհաստանի Հանրապետություն	Լեհաստանի Ժողովրդակ-ան Հանրապետություն	Լեհաստանի Հանրապետություն



ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԹԵՐԹԻ ՕՐԻՆԱԿՆԵՐ



Քաղաքական / սոցիալական / մշակութային / տնտեսական									
Լեհերեն / չեխերեն / գերմաներեն / եբրայերեն / այլ									
Տեղական / տարածաշրջան-ային / ազգային / միջազգային									
Սոցիալական խմբեր									
Փոփոխություններ									

	Քաղաքական / սոցիալական / մշակութային / տնտեսական	Լեհերեն / չեխերեն / գերմաներեն / եբրայերեն / այլ	Տեղական / տարածաշրջան-ային / ազգային / միջազգային	Սոցիալական խմբեր	Փոփոխություններ	

ԱՅՍ ՌԱՁՄԱՎԱՐՈՒԹՅԱՆ(ԴԱՍԻ) ՏԱՐԲԵՐԱԿՆԵՐԸ

Տարբերակ 1
Սովորողները կարող են ներկայացնել իրենց առաջարկությունները `բացատրելով տվյալ ոգեկոչման և գործելակերպի հնարավոր ճշգրտումները և փոփոխությունները՝ հաշվի առնելով ժամանակակից աշխարհի փոփոխվող իրողությունները, արժեքները, սոցիալական նպատակները և այլն: Օրինակ ` նրանք կարող են նախագծել իրենց սեփական հուշատախտակը կամ հուշարձանը (հուշարձանները), վերանվանել տարածքում գտնվող փողոցներ կամ հրապարակներ և այլն, և հիմնավորել դրանց տեղադրումը հանրային տարածքում: Պետք է խրախուսվի անցյալի վերաբերյալ տարբեր տեսակետների ներառումը (օրինակ ` անտեսված խմբերի տեսակետները):

- Ինչպիսի՞ն կլինի ձեր ոգեկոչումը: Որպես այլընտրանք, ինչպե՞ս է կոչվելու ձեր հանրային տարածքը:
- Հուշադախտակ կամ մակագրություն պարունակելու՞ է: Եթե այո, ապա ի՞նչ է նշվելու:
- Ո՞ր հանրային տարածքում եք տեղադրելու այս հիշատակի առարկան : Ինչու՞ եք ընտրել այս վայրը:
- Ի՞նչ պատճառով (պատճառներով) է այս հիշատակի առարկան տեղադրվում հանրային տարածքում:
- Ո՞ւմ տեսակետն (ներ) է արտահայտում այս հուշահամալիրը:
- Ո՞ր պատմական ժամանակաշրջանն է արտացոլված այս հուշահամալիրում:
- Ի՞նչ նպատակի է ծառայում այս հուշահամալիրը:
- Կարո՞ղ է ժամանակի ընթացքում ոգեկոչման այս օբյեկտը փոխվել:

Տարբերակ 2
Սովորողների խմբերից կարող է հանձնարարավել մշակել ոգեկոչման պրակտիկաներ տարբեր ժամանակաշրջաններին վերաբերող: : Օրինակ, 18-րդ, 19-րդ, 20-րդ, 21-րդ դարերում ինչ հուշարձաններ կտեղադրվեին հրապարակում, որպեսզի դրանք արտացոլեն տվյալ ժամանակահատվածում հասարակության գերիշխող առաքինությունները, քաղաքական նախապատվությունները, վերջին նվաճումները և քաղաքական նպատակները:

Տարբերակ 3
Ստեղծեք հուշատախտակներ, ինչպիսիք են Վրոցլավում գտնվող Նանկիերա հրապարակի հուշատախտակները, ձեր քաղաքի / գյուղի / շրջանի համար `հաշվի առնելով տվյալ տարածքի պատմության շրջադարձային պահերն ու շարունակականության տարրերը: Համոզվեք, որ ձեր մոտեցումը ընդունելի է և գրավիչ զբոսաշրջիկների համար:


EuroClio
Evens Foundation
Set in stone, history blinds. Set in motion, it opens minds.
HISTORY TEACHING MATTERS.
Find out how you can make a difference:
sharingeuropeanhistories.eu
An initiative of the Evens Foundation and EuroClio.